ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**(Ուսումնական առարկայի անվանումը)**

| | |
|---|---|
| Մասնագիտություն/ուղղություն | «Սոցիալական մանկավարժություն» |
| Ֆակուլտետ | Հասարակական գիտությունների |
| Որակավորումը | մանկավարժության բակալավր |
| Ուսուցման ձևը | հեռակա |
| Կուրս | 3-րդ |

ՎԱՆԱՁՈՐ

2023թ.

***Պրակտիկայի անցկացման վայրը՝ դպրոց***

**Պրակտիկայի ընթացակարգը՝ 1-ին կիսամյակ, տևողությունը՝ 5 օր.**

## *1.Պրակտիկայի նպատակը՝*

<u>Ուսումնական պրակտիկայի նպատակն</u> է նպաստել ուսանողի մասնագիտական գործունեության ակտիվացմանը, ձեռք բերել մասնագիտական հմտություններ, կարողություններ, ձևավորել համակարգված մոտեցում մասնագիտության և մանկավարժական գործունեության նկատմամբ, ծանոթանալ հաստատության կառուցվածքին, գործառույթներին, սոցիալական մանկավարժի աշխատանքային գործառույթներին և փաստաթղթերին:

## *2.Պրակտիկայի խնդիրները՝*

1. Մշակել սոցիալ-մանկավարժական իրադրությունները ճշգրիտ վերլուծելու կարողություններ
2. Ծանոթանալ կրթադաստիարակչական ուսումնական ծրագրերին, մանկավարժահոգեբանական աջակցող թիմի աշխատանքային գործունեությանը
3. Նպաստել ուսումնասիրելու արհեստավարժ մասնագետների փորձը

## *3. Պրակտիկանտ-ուսանողներին ներկայացվող պահանջների բովանդակությունը*

Ուսանողը պարտավոր է Վանաձորի թիվ 6 հիմնական դպրոցում ուսումնասիրել.

- ✓ պրակտիկայի ընթացքում խորացնել և ամրապնդել մասնագիտական գիտելիքները,
- ✓ ձևավորել սոցիալական մանկավարժի մասնագիտական կարողություններն ու հմտությունները,
- ✓ կարողանալ համագործակցել մյուս մասնագետների հետ,
- ✓ ձգտել ինքնահաստատվելու, ինքնարտահայտվելու համար,
- ✓ հաստատությունից վերցնել օգտակարն ու հարստացնել մասնագիտական փորձը:

### *3.1.Պրակտիկայի մասնակիցների պարտականությունները*

**Պրակտիկայի ղեկավարը**

- ընտրում է պրակտիկայի անցկացման հենակետերը, ապահովում է պրակտիկայի անցկացման պայմանները,
- անցկացնում է սկզբնական խորհրդատվություն՝ իսկ պրակտիկայի ավարտին՝ արդյունքների ամփոփում,
- կազմակերպում է ուսանողների աշխատանքը,
- վերահսկում է ուսանողների աշխատանքը, ձեռնարկում է միջոցներ՝ պրակտիկայի կազմակերպման թերությունները վերացնելու ուղղությամբ,
- անցկացնում է խորհրդատվություններ, օգնում է մանկավարժական հիմնախնդիրների լուծմանը,

- գնահատում է ուսանող-պրակտիկանտի աշխատանքը:
-

*3.2.Հիմնարկությունների աշխատակիցները (պրակտիկայի ղեկավարները տեղերում)*

- ստեղծում են պայմաններ՝ պրակտիկայի անցկացման համար,
- անցկացնում են խորհրդատվություններ, օգնում են սոցիալ-մանկավարժական խնդիրների լուծմանը,
- վերահսկում են ուսանողների կողմից պրակտիկայի ծրագրի սոցիալ-հոգեբանական շրջափուլի կատարումը,
- բացատրում են ուսանողներին սոցիալական մանկավարժի մասնագիտական պարտականությունները, տվյալ հաստատության գործունեության առանձնահատկությունները, ծանոթացնում են սոցիալական միկրոմիջավայրին,
- գնահատում են ուսանողի աշխատանքը:

*3.3.Ուսանողը պրակտիկայի ընթացքում.*

- գտնվում է տվյալ հաստատությունում օրական 6ժամ,
- պահպանում է տվյալ հաստատությունում աշխատանքային կարգապահությունը,
- հետևում է բոլոր նախանշված միջոցառումներին և խորհրդատվություններին,
- մշակում է պրակտիկայի իր անհատական պլանը, ներկայացնում է այն ղեկավարին՝ հաստատման,
- աշխատում է համաձայն հաստատված պլանի, ժամանակին ներկայացնում է հաշվետվություն (գրավոր և բանավոր),
- ներկայացնում է իր առաջարկները՝ պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ:

## *4.Կոմպետենցիաների ցանկ*

*Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝*

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,

ԳԿ2 կազմակերպելու և պլանավորելու ունակություն,

ԳԿ10 որոշումների ընդունում:

*Միջանձնային կոմպետենցիաներ (ՄՁԿ)՝*

ՄՁԿ1 քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,

ՄՁԿ2 թիմային աշխատանք,

ՄՁԿ3 միջանձնային ունակություններ,

*Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝*

ՀԳԿ3 սովորելու ունակություն,

ՀԳԿ5 նոր գաղափարներ առաջ քաշելու (ստեղծագործելու) ունակություն,

ՀԳԿ11 որակի կարևորության գիտակցում,

***Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)***

ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,

ԱԿ12 ունակ լինեն ուրույն, թեկուզ և փոքր ներդրում կատարելու

***5.Անհրաժեշտ փաստաթղթերն են՝***

- **Հաշվետվություն**
- **աշխատանքի պլան,**
- **թղթապանակ**:

***6. Պրակտիկայի գնահատումը.***

Ուսումնական պրակտիկայի գնահատման ձևը ստուգարքն է, իսկ պրակտիկայի գնահատականը հանդիսանում է ուսանողի ընդհանուր առաջադիմության բաղկացուցիչ մասը:

***7.Հաշվետվական թղթաբանություն***

Ուսումնական պրակտիկայի հաշվետվություն, պրակտիկայի գնահատականի և նրա բովանդակության մասին հաշվետվություն: